

տաններէն օր մը հայ հողին վրայ պիտի մնային քանի մը թափուր եւ աննշան ըստուերներ միայն:

Միջին դարու Հարք տեսնելով այդ դէպ ի քայքայում դիմող վիճակը, եւ յուսահատ վերանորոգելու հին ժուժկալու թիւնը՝ որ այլ եւս պատմութեան կը վերաբերէր, մեղմացուցին նախկին կանոնները, եւ բաւականացան չափաւորը միայն պահանջել: Շնորհալին գոհ էր՝ եթէ մեր միանձունք «յառաւելութիւն գինւոյ» չըտային իրենք զիրենք, «այլ պարկեշտութեամբ եւ օրինաւոր ըստ կարգի կրօնաւորաց» (Ընդհ. 20): Սարգսի համար գինւոյ «անչափն կարի ընդ մեղադրութեամբ է», բայց ոչ եւ չափաւորը (792): Ու Մխ. Գոշ յետ խրատելու Էւագրի հետ՝ որ բնաւ չըմպեն, կը թուլատրէ զայն՝ ըսելով նոյն հօր բացատրութեամբ. «Բայց եթէ ճաշակեսցես եւ զարարիչն օրհնեսցես¹»: անշուշտ շատ հաճելի պայման մը գինեսիրաց համար. «եւ կամ ի բժշկութիւն վարիցես սակաւ՝ հանդերձ երկիւղիւ» (Խր. ոգ.), այս վերջինս քիչ մը տարակուսական: Ասոնք ընդհանրապէս

1. Էւագ. 140, Տաթեւացին այդ խօսքը կ'ուզէ աշխարհականաց համար առնուլ (Յովհ. Գ), բայց հեղինակը վանականաց միայն կը խօսի: